ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

| | |
|---|---|
| 1. Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմ | |
| Չի ներկայացվել | |
| 2. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 3. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 4. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 5. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 6. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 7. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |

| | |
|---|---|
| 8. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 9. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 10. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 11. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 12. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 13. Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբ | |
| Չի ներկայացվել | |
| 14. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով | |
| Չի ներկայացվել | |
| 15. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմ | |
| Չի ներկայացվել | |

| | |
|---|---|
| 16. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ | 29.06.2023<br>N 02/08.86/20774-2023 |
| Առաջարկություններ և դիտողություններ չկան: | |
| 17. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ<br>Տիգրան Խաչատրյանի գրասենյակ | 07.07.2023<br>N 03.39/23176-2023 |
| 1.Նախագծի 19-րդ կետի 3-րդ ենթակետում շարունակական կատարելագործումը ի՞նչ քայլեր է ենթադրում, և նույն մասի 4-րդ ենթակետում ի՞նչ գնահատման գործիքներ է նախատեսվում կիրառել, | **1. Ընդունվել է:**<br>Նախագծի 19-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրվել է հետևյալ կերպ՝ «3) վիճակագրության մշակման և արտադրության մեթոդաբանության շարունակական կատարելագործում ու միջազգային համադրելիության ապահովում՝ հիմնվելով Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներից «Ոչ հակասականության և համադրելիության» սկզբունքի դրույթների վրա և դրանով իսկ ապահովելով միջազգային վիճակագրական պրակտիկայում կիրառվող չափանիշներին համապատասխանությունն ու համադրելիությունը, ինչպես նաև համաշխարհային տեղեկատվական շտեմարաններում ազգային վիճակագրական տվյալների ինտեգրման գործընթացը՝ որպես գնահատման գործիքներ կիրառելով վիճակագրության փորձագիտական գնահատումները (Peer Review),»:<br>Նախագծի 19-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրվել է հետևյալ կերպ՝ «4) ըստ գործունեության տեսակների չդիտարկվող (չհաշվառվող) տնտեսության գնահատման գործիքների կիրառում և դրանց |

| | |
|---|---|
| | շարունակականության ապահովում՝ հիմնականում հիմնվելով աշխատուժի հետազոտության ոչ ֆորմալ զբաղվածության գնահատումների վրա,»: |
| 2.Նախագծի 21-րդ կետի 1-ին ենթակետում առաջարկում եմ մանրամասնել, թե խոսքը ի՞նչ նորարարական տեխնոլոգիաների մասին է, | **2. Ընդունվել է:**<br>Նախագծի 21-րդ կետի 1-ին ենթակետի համապատասխան հատվածը շարադրվել է հետևյալ կերպ՝ «3) աշխատանքի վիճակագրության ոլորտի ենթաոլորտների վիճակագրական բիզնես գործընթացների բոլոր օղակներում նորարարական տեխնոլոգիաների (տեղեկատվության փոխանցման առցանց համակարգերի ներդրում)…», |
| 3.Նախագծի 21-րդ կետում տվյալների կոնսոլիդացիայի նպատակով առաջարկում եմ քննարկել նաև հաստիքների դասակարգիչների ներդրման տարբերակը, | **3. Չի ընդունվել:**<br>Խնդրո առարկա դասակարգչի **ներդրումը** դուրս է բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գործառույթների շրջանակից: Առաջարկված դասակարգչի ազգային տարբերակի մշակման հետ կապված միջոցառումներ (աշխատանքային քննարկումներ) նախաձեռնվել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ մի շարք շահագրգիռ գերատեսչությունների (այդ թվում՝ Արմստատի) ներկայացուցիչների մասնակցությամբ, որը սակայն ներկայում որևէ նկատելի առաջընթաց չի արձանագրել: Խնդրո առարկա դասակարգչի մշակումն ու կիրառումը կրում է համապետական բնույթ, |

| | |
|---|---|
| | ենթակա է մշակման համապատասխան ոլորտի պետական քաղաքականություն իրականացնող պետական մարմինների կողմից (ԱՍՀՆ, ԿԳՄՍ և այլն)՝ բոլոր շահագրգիռ մարմինների աջակցությամբ, ներառյալ՝ Արմստատի մեթոդաբանական աջակցությունը: |
| 4.Նախագծի 24-րդ կետում առաջարկում եմ ամփոփ ունենալ կազմակերպությունների ֆինանսական վիճակի, հաշվապահական հաշվեկշռի և եկամուտ վնասների մասին հաշվետվությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, | **4. Ընդունվել է մասամբ:**<br>Առաջարկվող ցուցանիշներն ըստ բնույթի վերաբերում են տարեկան կտրվածքով իրագործման ենթակա աշխատանքների ծրագրին: Ուստի կկատարվեն համապատասխան փոփոխություններ յուրաքանչյուր տարի հաստատվող տարեկան վիճակագրական ծրագրում: |
| 5.Նախագծում առաջարկում եմ նաև դիտարկել ոռոգման ոլորտի (ներառյալ՝ համապատասխան վարչական ռեգիստրը վարող լիազոր մարմնի հետ համատեղ) վիճակագրության վարումը, | **5. Ընդունվել է մասամբ:**<br>Ոռոգման համակարգի վիճակի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրը վարչական հաշվառումներն են: Ոռոգման ոլորտի գործունեությունը և այն բնութագրող ցուցանիշները հստակ սահմանելու համար անհրաժեշտ են լրացուցիչ քննարկումներ ՀՀ ջրային կոմիտեի (որպես ոլորտի լիազոր մարմնի) հետ՝ պարզելու տեղեկությունների աղբյուրների առկայության, ամբողջականության և հաշվառման պարբերականության հնարավորությունները (կարողությունները), որոնց արդյունքում կմշակվեն |

| | |
|---|---|
| 6.Նախագծում մանրամասնել շինարարության ոլորտին առնչվող բոլոր միջոցառումները: | տարեկան կտրվածքով իրագործման ենթակա աշխատանքների մանրամասնեցումները (միջոցառումները)՝ համապատասխան տարեկան ծրագրերի մշակման և կազմման աշխատանքների ժամանակ ըստ անհրաժեշտության ներառվելու նկատառումով:<br><br>**6. Ընդունվել է մասամբ:**<br>Առաջարկվող միջոցառումներն ըստ բնույթի վերաբերում են տարեկան կտրվածքով իրագործման ենթակա աշխատանքների ծրագրին: |
| 18. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ<br>Մհեր Գրիգորյանի գրասենյակ | 01.08.2023թ/<br>N 03.8/26203-2023 |
| Փոխվարչապետի հանձնարարությամբ՝ ի պատասխան Ձեր՝ 16.06.2023թ. N ՎԿ/2-18/1227-2023 գրության՝ հայտնում եմ, որ նախագծի վերաբերյալ դիտարկումներ առկա չեն:<br>Միաժամանակ, հաշվի առնելով Հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում ռազմավարական պլանավորման ու ծառայությունների մատուցման ուղղություններով տեղի ունեցող զարգացումները և փաստահենք քաղաքականություններ ունենալու հրամայականը՝ խնդրում ենք Ձեր դիրքորոշումը, թե արդյո՞ք հնարավոր է հաջորդ տարվանից սկսած հարցաշարերում հավելյալ հարցեր ներառելու միջոցով հավաքագրել նաև այնպիսի տվյալներ, որոնք էական են պետության ռազմավարական փաստաթղթերի մոնիտորինգի համար, ինչպես նաև հնարավորության դեպքում վերանայել պաշտոնական վիճակագրության հրապարակման ժամանակացույցը՝ | **Ընդունվել է ի գիտություն:**<br>Որոշակի քաղաքական ուղղվածության պետական ինստիտուտների կողմից մշակված ռազմավարական փաստաթղթերի (քաղաքականությունների) մշտադիտարկումը (մոնիթորինգը) դուրս է պաշտոնական վիճակագրության գործառույթներից այն պարզ պատճառով, որ «Պաշտոնական վիճակագրությունը, օրենքով լիազորված մարմինների կողմից պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան, հանրային կյանքի էական և չափակցելի երևույթների թվային արտահայտությամբ մշակված, արտադրված և տարածված, բացառապես վիճակագրական |

| | |
|---|---|
| քաղաքականությունների մշակման ու գնահատման գործընթացում դրանց արդիականությունը ապահովելու համար: Ձեր դիտարկումները ստանալուն պես պատրաստ ենք համակարգել ու աջակցել գործընթացին՝ պետական մարմիններին ներգրավելու միջոցով առանձնացնելով էական մի քանի ցուցանիշներ: | ծրագրերում արտացոլված վիճակագրությունն է, որը ներկայացուցչական հիմքով նկարագրում է Հայաստանի Հանրապետության տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական երևույթները:»: Սույն դրույթը սահմանված է Պաշտոնական վիճակագրության մասին օրենքով (Հոդված 3, մաս 1), որն ամբողջությամբ մշակված է «Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի համար պաշտոնական վիճակագրության մոդելային օրենքի» հիման վրա (ՄԱԿ, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով, Նյու Յորք և Ժնև, 2016 ):<br>Ավելին, պաշտոնական վիճակագրության մասին օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «Վիճակագրական կոմիտեն որոշակի քաղաքական ուղղվածությամբ պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող պետական մարմին է: Քաղաքական, վարչական, գերատեսչական շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությունը չներքաշելու երաշխիքները սահմանված են պաշտոնական վիճակագրության **հիմնարար սկզբունքներով**:»: Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները վերջին անգամ վերահաստատվել են ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից 2014թ.-ի հունվարի 29-ին՝ Բանաձև 68/261: |

| | |
|---|---|
| | Խորհրդային ժամանակաշրջանում, երբ գերակայում էր պետական սեփականությունը, վիճակագրության առաքելությունը պետության հաշվետար լինելն էր, քանզի ֆիսկալ գործառույթները ևս էական մասով իրագործվում էին վիճակագրական լիազորություն ունեցող մարմնի կողմից (դասական իմաստով առանձին հարկային մարմին առկա չէր, վիճակագրությունը վարվում էր ըստ առանձին տնտեսավարողների անվանական տեղեկությունների, հաշվառվում էին նաև դրանց պլանային ցուցանիշների կատարողականները, ամսական զեկույցները կրում էին «ծառայողական օգտագործման համար» մակնշում, ինչի արդյունքում վիճակագրությունը մշտապես գտնվել է քաղաքական, վարչական և գերատեսչական շահերի բախումներում, իսկ բոլոր տնտեսավարող սուբյեկտները պարտավոր էին ունենալ սկզբնական վիճակագրական ստորաբաժանումներ և վիճակագիրների հաստիքներ: Ամփոփ վիճակագրությունը միակն էր, որ տարեգրքերի տեսքով քիչ թե շատ հասանելի էր հանրությանը:):<br>Ի տարբերություն խորհրդային ժամանակաշրջանի, ընդհանրապես, ժողովրդավարական սկզբունքների վրա խարսխված ազատական տնտեսակարգով երկրներում, պաշտոնական վիճակագրության առաքելությունը՝ հանրությանը պաշտոնական վիճակագրությամբ ապահովելն է, իսկ վերը |

| | |
|---|---|
| | հիշատակված ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներից 6-րդի համաձայն գործում է «Վիճակագրական գաղտնիության սկզբունքը»՝ «Վիճակագրական հաստատությունների կողմից վիճակագրության մշակման համար հավաքված անհատական տվյալները, անկախ այն հանգամանքից, թե դրանք վերաբերում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պետք է կրեն խիստ գաղտնի բնույթ և օգտագործվեն բացառապես վիճակագրական նպատակներով»: Այս սկզբունքի վերաբերյալ դրույթներն առկա են նաև «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքում (տե՛ս՝ Հոդված 6, մաս 1, կետ 6, Հոդված 23, մաս 1, Հոդված 24, մաս 1 և այլն):<br>Ինչ վերաբերում է պաշտոնական վիճակագրության հրապարակման ժամանակացույցի՝ «քաղաքականությունների մշակման գնահատման գործընթացին» հարմարեցնելուն միտված փոփոխություններին, ապա հարկ է նշել, որ ժամանակացույցի կազմման, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման հիմքում դրված են բացառապես վիճակագրական ծրագրերը (տե՛ս՝ «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը), իսկ վիճակագրական ծրագրերը, ինչպես նշված էր Արմստատի գրության մեջ |

| | |
|---|---|
| | կազմվում են հաշվի առնելով 7 սկզբունքների պահանջները («Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 14-րդ հոդված, մաս 2, մաս 3 և մաս 4).<br>1) առկա ռեսուրսների սահմանափակումներ,<br>2) վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալ,<br>3) ծախսերի արդյունավետություն,<br>4) երկրի ցուցանիշների համադրելիություն միջազգային վիճակագրական չափորոշիչներին,<br>5) երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու նպատակով հնարավոր կայուն պարբերականություն,<br>6) տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափություն,<br>7) պաշտոնական վիճակագրություն օգտագործողների պահանջարկի ուսումնասիրություն:<br>Միաժամանակ, պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներից առաջինը՝ «Պրոֆեսիոնալ անկախությունը», պահանջում է, որ պաշտոնական վիճակագրություն արտադրողները պաշտոնական վիճակագրության տարածման ժամկետների հետ կապված իրենց որոշումները կայացնեն անկախ և առանց քաղաքական կամ այլ արտաքին աղբյուրներից որևէ ճնշման և միջամտության («Պաշտոնական |

| | |
|---|---|
| | վիճակագրության մասին օրենք», Հոդված 6, մաս 1, կետ 1)։<br>Հետևաբար, տարածման ժամանակացույցը կազմվում է բացառապես վերոհիշյալ դրույթների հիման վրա։ Հակառակ պարագայում անմիջապես կխախտվեն պաշտոնական վիճակագրության նկատմամբ վստահության աճին միտված բոլոր ջանքերը (տե՛ս՝ նաև «Պաշտոնական վիճակագրության նկատմամբ վստահության պակասի օբյեկտիվ պատճառները» խորագրով նյութը)։<br>Այլ կերպ ասած, ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները պաշտոնական վիճակագրության գործառույթների շրջանակում բացառում են քաղաքական և գերատեսչական ծրագրերով նախատեսված միջոցառումների մշտադիտարկումները։ |
| 19. Հայաստանի Հանրապետության սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար | 21.06.2023 |
| | N 52/21230-2023 |
| Առաջարկություններ և դիտողություններ չկան։<br><br>Միևնույն ժամանակ, տեղեկացնում ենք, որ ծրագրի «Ժողովրդագրություն» բաժինն իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գրասենյակի աշխատանքների համատեքստում։ | |
| 20. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի | 12.07.2023 |

| | |
|---|---|
| քաղաքացիական ծառայության գրասենյակ | N 42//23977-2023 |
| 1.Նախագծի 6-րդ կետում անհրաժեշտ է վերանայել «Արմստատը պետական մարմին է» ձևակերպումը՝ հաշվի առնելով, որ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ կառավարությանը ենթակա մարմին է հանդիսանում Վիճակագրական կոմիտեն, ինչն արտացոլված է նաև «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի կարգավորումներում:<br><br>2. Նախագծի 19-րդ կետի 1-ին ենթակետում անհրաժեշտ է վերանայել և հստակեցնել «Հայաստանի դասակարգչին» ձևակերպումը:<br><br>3. Նախագծի 43-րդ կետում անհրաժեշտ է վերանայել «առանձնացված ստորաբաժանումների» ձևակերպումը՝ նկատի ունենալով ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 741-Լ որոշմամբ հաստատված Վիճակագրական կոմիտեի կառուցվածքը, որում նախատեսված են միայն կառուցվածքային ստորաբաժանումներ: | 1. **Ընդունվել է:**<br>Կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>**2.Ընդունվել է:**<br>Կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>**3. Ընդունվել է:**<br>Կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| 21. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | 17.07.2023թ<br>N ԱԱ/19/16289-2023 |
| Առաջարկություններ և դիտողություններ չկան: | |
| 22. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն | |
| Չի ներկայացվել | |
| 23. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | 03.07.2023<br>N 10.2/31566-2023 |
| 1.Նախագծի առաջին էջի վերևի աջ անկյունում առաջարկվում է լրացնել | 1. **Ընդունվել է:** |

| | |
|---|---|
| «ՆԱԽԱԳԻԾ» բառը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները:<br><br>2. Նախագծի նախաբանում որպես լիազորող նորմի՝ հղում է կատարվում նաև «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 15-րդ հոդվածին: Այս առումով պետք է նկատել, որ հիշյալ հոդվածին կատարված հղումը՝ որպես ներկայացված Նախագծի ընդունման իրավական հիմք, խնդրահարույց է այն համատեքստում, որ թեև վերաբերելի է քննարկվող հարաբերություններին, սակայն չի հանդիսանում Նախագծի ընդունման համար լիազորող նորմ:<br>Մասնավորապես, հիշյալ հոդվածի կարգավորմամբ սահմանում է, թե ինչ նպատակի է ծառայելու հնգամյա վիճակագրական ծրագիրը, նկարագրվում է հիշյալ ծրագրի մշակման գործընթացը, մասնավորապես՝ այն նպատակները, հայեցակարգային մոտեցումներն ու զարգացման գերակա ուղղությունները, որոնք ենթակա են լինելու կատարման, մինչդեռ հարկ է նկատել, որ ներկայացված նախագիծը Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական **ծրագրի հաստատման մասին է**: Հետևաբար, Նախագծի նախաբանն անհրաժեշտ է խմբագրել՝ հանելով տվյալ իրավական նորմին կատարված հղումը:<br>Սույն դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, որի համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ունենում է նախաբան, որում նշվում է օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է **Սահմանադրության <u>6-րդ հոդվածի 2-րդ մասով</u> սահմանված լիազորող նորմեր:** | Կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br><br>**2.Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |

| | |
|---|---|
| 3. Նախագծով հաստատվող հավելվածի (այսուհետ՝ Հավելված) վերևի աջ անկյունում նշված՝ «Հավելված» բառից հետո առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» բառերը: | **3.Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |
| 4. Հավելվածի 8-րդ կետում «քաղաքականության կողմնորոշված» բառերն առաջարկում ենք փոխարինել «քաղաքական ուղղվածությամբ» բառերով՝ հիմք ընդունելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները: | **4. Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |
| 5. Հավելվածի 11-րդ կետում «գիտելիքի» բառն առաջարկում ենք վերանայել: Այս առումով հարկ է նկատել, որ Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնական վիճակագրությունն իրենից ներկայացնում է օրենքով լիազորված մարմինների կողմից պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան, հանրային կյանքի էական և չափակցելի երևույթների թվային արտահայտությամբ մշակված, արտադրված և տարածված, **բացառապես վիճակագրական ծրագրերում արտացոլված վիճակագրություն, որը ներկայացուցչական հիմքով նկարագրում է Հայաստանի Հանրապետության տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական երևույթները**: Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները վերաբերում են վիճակագրական **տվյալների** հավաքագրմանը, վիճակագրական նպատակներով հավաքված և վիճակագրական ծրագրերով տարածված տվյալներին, **մեթատվյալներին** և այլն:<br>Վերոնշյալ դրույթների համատեքստում առավել նպատակային կլինի | **5. Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |

| | |
|---|---|
| կիրառել այնպիսի տերմիններ, որոնք սահմանված են Օրենքում և բխում են Նախագծի կարգավորումներից: | |
| 6. Հավելվածի 27-րդ կետով նախատեսվում է սոցիալական ոլորտում իրականացնել որոշակի միջոցառումներ, մինչդեռ հիշյալ կետի 1-ին ենթակետով սոցիալական ոլորտում ներառված են նաև **կրթության, գիտության, մշակույթի, սպորտի ոլորտները**: Այս առումով գտնում ենք, որ սոցիալական ոլորտին առնչվող միջոցառումները պետք է ունենան բացառապես սոցիալական բաղադրիչներ: | **6. *Չի ընդունվել:*** Պաշտոնական վիճակագրության մեջ օգտագործվող առավել բարձր խմբավորման առանձնահատկություններով պայմանավորված հիշատակված ոլորտները ներառված են սոցիալական երևույթների համախմբման (համարվում է սոցիալական երևույթ) մեջ, ինչպես որ դա արտացոլված է նաև «Պաշտոնական վիճակագրության մոդելային օրենք Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի համար»-ի հիման վրա մշակված «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում: |
| 7. Հավելվածի 28-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսվում է իրականացնել աղքատության նյութական և ոչ նյութական ցուցանիշների վարման շարունակականության ապահովում ու կատարելագործում: Այս առումով պարզաբանման կարիք ունի, թե ինչ են իրենցից ներկայացնում աղքատության **նյութական և ոչ նյութական** ցուցանիշները: | **7. *Չի ընդունվել:*** Աղքատության վիճակագրության մեթոդաբանության մշակման առաջատար միջազգային կազմակերպությունը համարվում է Համաշխարհային բանկը, որի մշակած և երկրներում կիրառվող ցուցանիշների դասակարգումը տարբերակվում է նյութական և ոչ նյութական աղքատության ցուցանիշների: Դրանց սահմանումներն առկա են «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2022» վիճակագրական վերլուծական |

| | |
|---|---|
| | զեկույցի Գլուխ 2, 2.1.1 հիմնական հասկացություններ, էջ 32-ում հետևյալ հղման ներքո՝ https://www.armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf: |
| 8. Հավելվածի 29-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված միջոցառումներում նախատեսված են դրույթներ միայն ծննդի, ամուսնության, ամուսնալուծության և մահվան ակտային գրանցումների վերաբերյալ: Այս առումով հարկ է նկատել, որ անդրադարձ չկա հայրության ճանաչման, որդեգրման և անվան փոփոխման ակտային գրանցումներին: | **8. Ընդունվել է մասամբ:**<br>Հայրության ճանաչման մասով՝ կատարվել են համապատասխան փոփոխություններ հավելվածի 29-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում:<br>«Որդեգրման» ակտային գրանցումների մասով տեղեկացվում է, որ դրանց վիճակագրական տվյալները կիսամյակային հաշվետվություններով ստացվում և ամփոփվում են սոցիալական վիճակագրության ցուցանիշների շարքում:<br>Ինչ վերաբերում է «անվան փոփոխման» ակտային գրանցումներին, ապա հարկ է նկատել, որ այս վիճակագրության վարման միջազգային փորձ հայտնի չէ, և հետևաբար, սույն ծրագրի շրջանակում դրանց վիճակագրական մշակումը նպատակահարմար չէ: |
| 9. Հավելվածի 34-րդ կետի 5-րդ ենթակետում հղում է կատարվում Եվրոպական վիճակագրական համակարգի Փորձառության օրենսգրքին, մինչդեռ Հավելվածի այլ կետերում նշված է Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրք:<br>Այս առումով առաջարկում ենք միատեսակ և ճիշտ նշել հիշյալ օրենսգրքի անվանումը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ և 17-րդ հոդվածների պահանջները: | **9. Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |

| | |
|---|---|
| 10. Հավելվածի առանձին մասերով անդրադարձ է կատարվում տարբեր ոլորտներին առնչվող մի շարք միջոցառումների, որոնք առնչվում են պետական մարմիններին վերապահված լիազորություններին (օրինակ՝ Արդարադատության նախարարություն, Ներքին գործերի նախարարություն և այլն), սակայն նշված միջոցառումները ներկայացված են ընդհանրական ձևով, ինչի արդյունքում հնարավոր չէ ամբողջական գնահատել, թե յուրաքանչյուր մարմին ներկայացված ծրագրի շրջանակում ինչ անելիքներ ունի, ինչ ժամկետներում և այլն: Ուստի, գտնում ենք, որ անհրաժեշտ է սահմանել ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների այնպիսի նկարագիր, որով հստակ կսահմանվեն նախատեսվող միջոցառումների պատասխանատու կատարողները, **համակատարողները,** ֆինանսական աղբյուրները, իրականացման ժամկետները և այլն: | **10. Չի ընդունվել:**<br>«Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են՝ հնգամյա և տարեկան: Սույն նախագծով հաստատվում է ՀՀ 2024-2028 (հնգամյա) վիճակագրական ծրագիրը, որը Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ***սահմանում է ՀՀ պաշտոնական վիճակագրության ռազմավարական զարգացման ուղղությունները և ազգային վիճակագրական համակարգի հայեցակարգային մոտեցումները***: Ձեր կողմից բարձրացված հարցերի կապակցությամբ հարկ է նշել, որ Օրենքի 16-րդ հոդվածով սահմանվում է, որ՝ ***տարեկան վիճակագրական ծրագիրը հիմնվում է փուլ ժամանակաշրջանը ներառող հնգամյա վիճակագրական ծրագրի վրա*** և մշակվում է յուրաքանչյուր տարի պաշտոնական վիճակագրության արտադրողների ցանկի նորացման և ստորև թվարկվածի համար իրավական հիմք ապահովելու նպատակով ու ներառում է՝<br>1) տարածման ենթակա ողջ պաշտոնական վիճակագրությունը.<br>2) *պաշտոնական վիճակագրություն արտադրողների* |

| | |
|---|---|
| | *կողմից իրականացվելիք վիճակագրական հետազոտությունները.*<br>3) պաշտոնական վիճակագրություն արտադրողներին *վարչական տվյալների կամ այլ աղբյուրների տվյալների տրամադրման բոլոր դեպքերը.*<br>4) պաշտոնական վիճակագրության *հիմնական մշակումները.*<br>5) *վիճակագրական ռեգիստրների վարման և մշակման միջոցառումները*:<br>Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***պարեկան վիճակագրական ծրագիրը*** պարունակում է տարածման ենթակա ողջ պաշտոնական ***վիճակագրության ցանկը՝ ըստ յուրաքանչյուր արտադրողի, տեսակների և հաճախականության***:<br>Ուստի Ձեր կողմից նշված՝ ծրագրի միջոցառումների պատասխանատու կատարողները, համակատարողները, իրականացման ժամկետները և այլն, մանրամասն կսահմանվեն *պարեկան վիճակագրական ծրագրով*՝ համաձայն Օրենքի: |
| 11. Հավելվածի ամբողջ տեքստի համարակալման կապակցությամբ հարկ է նկատի ունենալ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի պահանջները, համաձայն որոնց՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի, իսկ | **11. Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |

| | |
|---|---|
| ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք տեքստից բաժանվում են միջակետով: Ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք տեքստից բաժանվում են փակագծով: Պարբերությունները համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով, որոնք տեքստից բաժանվում են միջակետով: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում բովանդակությամբ համասեռ կետերը կարող են միավորվել գլուխներում: Գլուխները կարող են միավորվել բաժիններում: | |
| 12. Նախագծին կից ներկայացված հիմնավորման դրույթները վերանայման կարիք ունեն, մասնավորապես՝ հիմնավորումն անհրաժեշտ է լրամշակել և խմբագրել՝ ներկայացնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան հիմնավորում, որը հնարավորություն կտա լիարժեք կերպով գնահատելու առաջարկվող կարգավորումները: Հարկ է նշել, որ նախագծի հիմնավորման միջոցով նախագիծը մշակող պետական մարմինը պարզաբանում է իրավական ակտի ընդունման նպատակը, կարգավորման անհրաժեշտությունը, կարգավորման համար ընտրված եղանակի նպատակահարմարությունը, պարզաբանում է նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը, իրավական ակտի ընդունմամբ ակնկալվող արդյունքները, որոնք սակայն ներկայացված հիմնավորմամբ բավարար չափով նկարագրված չեն, իսկ որոշ կետեր առհասարակ բացակայում են: | **12. Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |

| | |
|---|---|
| 24. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն | 24.07.2023<br>N 1111/38392-23 |

| | |
|---|---|
| 1.Էջ 1, 2-րդ կետում «եվրոպայի» բառը փոխարինել «եվրոպական» բառով<br><br>2. Էջ 2, «եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքով» բառերը փոխարինել «եվրոպական վիճակագրության պրակտիկայի կանոնակարգով» բառերով<br><br>3. Էջ 2 «եվրոպայի» բառը՝ «եվրոպական»<br><br>4. Էջ 2 Եվրահանձնաժողով» բառը՝ «եվրոպական հանձնաժողով»<br><br>5. Էջ 2 «եվրոպայի» բառը՝ «եվրոպական»<br><br>6. Էջ 14, կետ 2<br>«կլիմայի փոփոխությանն առնչվող ցուցանիշների ընդլայնում և կատարելագործում՝ միջազգային մեթոդաբանությանը համապատասխան» պարբերությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝<br>«Հայաստանի կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզի հիման վրա՝ կլիմայի փոփոխությանն առնչվող ցուցանիշների, մասնավորապես՝ ջերմոցային գազերի արտանետումների (ՋԳԱ) և դրանց համար աղբյուր հանդիսացող մարդկային գործունեության, առաջնային էներգիայի պահանջարկի, հանածո վառելիքի էներգիայի օգտագործման /սպառում և առաջացող CO2 արտանետումներ/, մարդկային և բնական համակարգերի վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման ընդլայնում և կատարելագործում՝ միջազգային մեթոդաբանությանը համապատասխան»: | **1. Չի ընդունվել:**<br><br>**2. Չի ընդունվել:**<br><br><br><br>**3. Չի ընդունվել:**<br><br>**4. Ընդունվել է:**<br><br>**5. Չի ընդունվել:**<br><br>**6. Ընդունվել է մասամբ:**<br>Նախագծի 30-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրվել է հետևյալ կերպ՝ «2) Հայաստանի կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզի հիման վրա՝ կլիմայի փոփոխությանն առնչվող ցուցանիշների ընդլայնում և կատարելագործում՝ միջազգային մեթոդաբանությանը և վարչական հաշվառումներին համապատասխան:» |

| | |
|---|---|
| 7. էջ 15 երկու տեղ «եվրոպայի» բառը փոխարինել «եվրոպական» բառով | **7. Չի ընդունվել:** |
| 8. էջ 16, կետ 35, նախադասության վերջում կա ավելորդ կետ | **8. Ընդունվել է:** |
| 9. էջ 17, Միջազգային համագործակցություն հատված<br>36.«Վիճակագրության բնագավառում միջազգային համագործակցությունը, հանդիսանալով ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար և եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքներից մեկը, ժամանակակից արագ զարգացող և փոփոխվող աշխարհում կարևոր դեր է խաղում պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրության և տարածման համար: Դրանով պայմանավորված, նախատեսվում է շարունակել և առավել ընդլայնել միջազգային վիճակագրական համագործակցությունն ըստ հետևյալ նպատակների» պարբերությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝<br>«Վիճակագրության բնագավառում միջազգային համագործակցությունը ժամանակակից աշխարհում կարևոր դերակատարություն ունի պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրության և տարածման տեսանկյունից: Դրանով պայմանավորված, նախատեսվում է շարունակել և առավել ընդլայնել միջազգային վիճակագրական համագործակցությունն՝ հիմնվելով հետևյալ սկզբունքների վրա՝»<br>36.2)«լավագույն փորձի փոխանակման միջոցով՝ Հայաստանում եվրոպական և միջազգային ստանդարտների հետագա խթանում և ազգային վիճակագրական արտադրանքն եվրոպական նորմերին և ստանդարտներին համապատասխանեցում ՝»<br>պարբերությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝<br>«փորձի փոխանակման միջոցով՝ Հայաստանում միջազգային լավագույն | **9. Ընդունվել է մասամբ:**<br>Նախագծի 36-րդ կետը շարադրվել է հետևյալ կերպ՝ «Վիճակագրության բնագավառում միջազգային համագործակցությունը, հանդիսանալով ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար և եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքներից մեկը, ժամանակակից աշխարհում կարևոր դերակատարություն ունի պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրության և տարածման համար: Դրանով պայմանավորված, նախատեսվում է շարունակել և առավել ընդլայնել միջազգային վիճակագրական համագործակցությունն ըստ հետևյալ նպատակների»<br><br>**36.2) Չի ընդունվել:** |

| | |
|---|---|
| ստանդարտների հետագա խթանում և Ազգային վիճակագրական ծառայության աշխատանքը միջազգային նորմերին և ստանդարտներին համապատասխանեցում,»<br>«ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար, Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի, Պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագրի և Միջազգային վիճակագրական գործունեության կառավարման սկզբունքների ամբողջական կիրառման ապահովում:»<br>պարբերությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝ | |
| 36.3) «ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների, Եվրոպական վիճակագրության պրակտիկայի կանոնագրքի (European Statistics Code of Practice), Մասնագիտական էթիկայի մասին հռչակագրի և Միջազգային վիճակագրական գործունեության կառավարման սկզբունքների կիրառման ապահովում:» | **36.3) Ընդունվել է մասամբ** հետևյալ խմբագրմամբ՝<br>«ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար, Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի, Պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագրի և Միջազգային վիճակագրական գործունեության կառավարման սկզբունքների կիրառման ապահովում:» |
| 37.«Արմստատը կշարունակի ակտիվ մասնակցությունը միջազգային համագործակցության շրջանակում համաշխարհային մասշտաբով վիճակագրական մեթոդաբանության և փորձառության կատարելագործման, միասնականացման և ներդաշնակեցման, ազգային վիճակագրական ծառայությունների կողմից պաշտոնապես հրապարակվող իրենց երկրների սոցիալ-տնտեսական վիճակի և բնակչության կենսամակարդակի վերաբերյալ ցուցանիշների համադրելիության ապահովման ուղղությամբ, ինչը կիրականացվի հետևյալ հիմնական ուղղություններով.»<br>պարբերությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝<br>«Արմստատը կշարունակի ակտիվ ներգրավվածությունը միջազգային համագործակցության շրջանակում վիճակագրական մեթոդաբանության և | **37. Ընդունվել է մասամբ** հետևյալ խմբագրմամբ՝<br>«Արմստատը կշարունակի ակտիվ ներգրավվածությունը միջազգային համագործակցության շրջանակում վիճակագրական մեթոդաբանության և փորձառության կատարելագործման, ընդունված միջազգային նորմերի ներդաշնակեցման, տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների կողմից հրապարակվող տեղեկությունների ուսումնասիրության և ցուցանիշների համադրելիության ապահովման ուղղությամբ, ինչը կիրականացվի հետևյալ հիմնական ուղղություններով.» |

| | |
|---|---|
| փորձառության կատարելագործման, ընդունված միջազգային նորմերի ներդաշնակեցման, տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների կողմից հրապարակվող տեղեկատվության ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում ցուցանիշների համադրելիության ապահովման ուղղությամբ, ինչը կիրականացվի հետևյալ հիմնական ուղղություններով.» | |
| 37.1) «միջազգային կազմակերպությունների և այլ արտասահմանյան փորձագետների մասնակցությամբ համագործակցության նախագծերի մշակում և իրականացում՝ միջազգային կազմակերպությունների տեխնիկական աջակցության ազգային և տարածաշրջանային ծրագրերի ֆինանսական միջոցների հաշվին,»<br>պարբերությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝<br>«միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա փորձագետների մասնակցությամբ համագործակցության նախագծերի մշակում և իրականացում՝ միջազգային կազմակերպությունների տեխնիկական աջակցության պետական և տարածաշրջանային ծրագրերի ֆինանսական միջոցների հաշվին,» | **37.1) Ընդունվել է մասամբ** հետևյալ խմբագրմամբ՝<br>«միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա փորձագետների մասնակցությամբ համագործակցության նախագծերի մշակում և իրականացում՝ միջազգային կազմակերպությունների տեխնիկական աջակցության ազգային և տարածաշրջանային ծրագրերի ֆինանսական միջոցների հաշվին,» |
| 37.2) «համագործակցություն արտասահմանյան երկրների ազգային վիճակագրական ծառայությունների հետ երկկողմանի և բազմակողմանի հիմունքներով (այդ թվում՝ Անկախ պետությունների համագործակցության և Եվրասիական տնտեսական միության երկրների հետ):»<br>պարբերությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝<br>«համագործակցություն այլ երկրների ազգային վիճակագրական Ծառայությունների հետ՝ երկկողմ և բազմակողմ ձևաչափերում:» | **37.2) Ընդունվել է:**<br>«համագործակցություն այլ երկրների ազգային վիճակագրական Ծառայությունների հետ՝ երկկողմ և բազմակողմ ձևաչափերում:» |

| | |
|---|---|
| 39. «ՀՀ - ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակում (Մաս 4, Գլուխ 3, ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՀՈԴՎԱԾ 30 - 35), Արմստատը կշարունակի իր համագործակցությունը ԵՄ-ի հետ վիճակագրական խնդիրների վերաբերյալ:» պարբերությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝ «ՀՀ - ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակում (Մաս 4, Գլուխ 3, ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՀՈԴՎԱԾ 30 - 35), Արմստատը կշարունակի իր համագործակցությունը ԵՄ համապատասխան կառույցների հետ:» | **39. Ընդունվել է:** «ՀՀ - ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակում (Մաս 4, Գլուխ 3, ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՀՈԴՎԱԾ 30 - 35), Արմստատը կշարունակի իր համագործակցությունը ԵՄ համապատասխան կառույցների հետ:» |
| 25. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն | 11.07.2023<br>N 1/01.4/10554-2023 |
| Առաջարկություններ և դիտողություններ չկան: | |
| 26. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 14.07.2023<br>N 01/21/18119-2023 |
| Առաջարկություններ և դիտողություններ չկան: | |
| 27. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն | 06.07.2023<br>N ՊՆ/510/3967-2023 |
| Առաջարկություններ և դիտողություններ չկան : | |
| 28. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 11.07.2023<br>N ՆՄ/ԱՀ-3-2/17240-2023 |
| Առաջարկություններ և դիտողություններ չկան : | |
| 29. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | 18.07.2023<br>N 01/17.1/6845-2023 |
| Առաջարկում ենք Նախագծում ներառել ստորև ներկայացված | **Չի ընդունվել:** |

<table>
<tr><td>ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրման մեթոդների մշակումը և տվյալների հավաքագրումը.<br>1. Բարձր տեխնոլոգիական ոլորտի ներկրման ծառայությունների ծավալ (դրամական արտահայտությամբ),<br>2. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ծառայությունների ներկրման ծավալ (դրամական արտահայտությամբ),<br>3. Ծրագրային ապահովման ծառայությունների ծախսեր և ՀՆԱ հարաբերակցություն,<br>4. Բարձր տեխնոլոգիական արտադրության ծավալ (դրամական արտահայտությամբ)<br>5. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության արտահանման ծավալ (դրամական արտահայտությամբ)<br>6. ՏՀՏ ծառայությունների արտահանման ծավալ (դրամական արտահայտությամբ)</td><td colspan="2">Հնգամյա վիճակագրական ծրագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրության ռազմավարական զարգացման հիմնական ուղղությունները, իսկ առաջարկվող ոլորտը բնութագրող ցուցանիշներն (ցուցանիշների որոշակի մասը արդեն իսկ արտացոլված է Արմստատի կողմից հրապարակվող ՀՀ վճարային հաշվեկշռում) ըստ բնույթի վերաբերում են տարեկան (ընթացիկ) կտրվածքով իրագործման ենթակա աշխատանքների ծրագրին, որը՝ համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի դրույթների, մշակվում է պաշտոնական վիճակագրության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա:</td></tr>
<tr><td colspan="2" rowspan="2">30. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն</td><td>22.06.2023</td></tr>
<tr><td>N 01/06.2/3904-2023</td></tr>
<tr><td>Առաջարկություններ և դիտողություններ չկան:</td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="2" rowspan="2">31. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</td><td>29.06.2023</td></tr>
<tr><td>N ԳՍ//18964-2023</td></tr>
<tr><td>Հաշվի առնելով այն փաստը, որ ներկայումս մշակման փուլում է գտնվում ՀՀ զբոսաշրջային ռազմավարությունը, ինչը ենթադրում է բազմաթիվ ծրագրեր և ներդրումներ այդ ոլորտում, առաջարկում ենք տարածքային վիճակագրության բաժնում, որպես տնտեսության ճյուղի վիճակագրական ցուցանիշ ավելացնել մարզի զբոսաշրջային հոսքը (զբոսաշրջիկների</td><td colspan="2">Չի ընդունվել:<br>Հնգամյա վիճակագրական ծրագիրը ներառում է վիճակագրական ոլորտի հիմնական ուղղությունները՝ առանց ցուցանիշների մանրամասնեցման: Վերջիններս ներկայացվում են հնգամյա վիճակագրական ծրագրից</td></tr>
</table>

| | |
|---|---|
| քանակը նշված ժամանակահատվածում՝ հետագայում որպես ելակետային տվյալ կիրառելու համար): | բխող տարեկան վիճակագրական ծրագրերում: Տարեկան կտրվածքով, զբոսաշրջության ցուցանիշները հրապարակվում են «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» վիճակագրական ժողովածուում: |
| 32. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն | 26.07.2023<br>N 01/6-2/14134-2023 |
| 1. Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է իրականացնել ազգային հաշիվների համակարգի մեթոդաբանական հենքով համախառն ներքին արդյունքի բացարձակ ծավալի և շարժընթացի հետընթաց վերանայման աշխատանքներ: Այս կապակցությամբ առաջարկում ենք մեծ ծավալի վերանայումներ իրականացնելիս վիճակագրական կոմիտեի կայքէջում հրապարակել նաև իրականացված վերանայումների ընդգրկման ժամանակաշրջանի և վերանայումների իրականացման պատճառների մասին տեղեկատվություն՝ օգտվողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: | **1. Ընդունվել է ի գիտություն:**<br>Դա ընդհանրապես ընդունված պրակտիկա է ինչպես ԱՀՀ-ի ցուցանիշների հիմնական վերանայումների պարագայում, այնպես էլ Արմստատի կողմից իրականացվող այլ վերանայումների ժամանակ: |
| 2. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից բնակչության սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշները (օր.՝ աղքատությունը, Ջինիի գործակիցը և այլն) հրապարակվում են տարվա երկրորդ կեսին կամ տարեվերջին, մինչդեռ բյուջետային գործընթացի շրջանակներում դրանք ունեն առանցքային նշանակություն՝ բնակչության սոցիալական պատկերը գնահատելու և ճիշտ որոշումներ կայացնելու համար: Հատկապես խոսքը վերաբերում է բյուջեի տարեկան հաշվետվություններին, որոնք ԱԺ են ներկայացվում մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը: Այդ փուլում նախորդ տարվա սոցիալական պատկերը ճիշտ հասկանալու, | **2. Չի ընդունվել:**<br>Յուրաքանչյուր տարվա ՏՏԿԱՀ տվյալների հավաքագրումն ավարտվում է հաջորդ տարվա փետրվարին, որից հետո ձևավորվում է տվյալների ամբողջական բազան: Դրանից հետո սկսվում է տվյալների առաջին ստուգաճշտման և անվանազերծման գործընթացը: Անվանազերծված տվյալների շտեմարանը տրամադրվում է Համաշխարհային բանկի փորձագետներին՝ |

| | |
|---|---|
| հարկաբյուջետային քաղաքականության ազդեցություններն առավել համապարփակ գնահատելու համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ նախորդ տարվա սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ: Հետևաբար, առաջարկում ենք հաշվարկել և հրապարակել դրանք (առնվազն նախնական տարբերակով) առավել օպերատիվ կերպով՝ մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլ ամիսը: | զուգահեռաբար իրականացնելով երկրորդ ստուգաճշտման աշխատանքները: Այդ ընթացքում (մայիս –սեպտեմբեր ամիսներին) Համաշխարհային բանկի փորձագետների հետ քննարկվում են բազմաթիվ հարցեր (բացահայտված թվաբանական և տրամաբանական անճշտությունները, ելքային աղյուսակների ձևաչափերը և այլն): Վերոհիշյալ գործընթացներն իրենց աշխատատարությամբ և ժամանակատարությամբ անհնար են դարձնում առկա ռեսուրսներով սեղմ ժամկետներում աշխատանքների իրականացումը: |
| 3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Ֆինանսների նախարարություն» բաժնի «31.2 Խոշոր հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի (ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատումների իրականացում» միջոցառման կատարման շրջանակներում կարևորում ենք ՀՀ ՎԿ կողմից ստորև ներկայացված տեղեկատվության հրապարակումը. | **3. Չի ընդունվել:** |
| 1. **«Ծախսեր-թողարկում» աղյուսակ:** Սույն աղյուսակի հրապարակումը կարևորվում է ՀՀ հարկային ներուժի և ճեղքի առավել ճշգրիտ ու ընդգրկուն գնահատականներ ստանալու և հարկային համակարգի հիմնական խոցելի կողմերի բացահայտման ու որոշակի ճշգրտող գործիքակազմի կիրառման միջոցով հարկային համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համատեքստում: | 1. Արմստատը բարձր է գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Ֆինանսների նախարարություն» բաժնի «31.2 Խոշոր |

| | |
|---|---|
| Հարկ ենք համարում ընդգծել, որ հարկային ներուժի և ճեղքի գնահատման հաշվարկներում «Ծախսեր-թողարկում» աղյուսակի առանձին բաղադրիչների ներառման կարևորությունը մատնանշվում է նաև տնտեսագիտական գրականությունում առկա ուղենշային հանդիսացող մի շարք աղբյուրներում: | հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի (ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատումների իրականացում» միջոցառման իրականացմանն ուղղված ջանքերը, և այդ համատեքստում նույնպես կարևորում է «Ծախսեր-թողարկում», այդ թվում՝ «ռեսուրսներ-օգտագործում» աղյուսակների առկայությունը:<br>Ինչպես հայտնի է վերջիններիս կառուցման աշխատանքներում Ասիական Զարգացման Բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) Գիտելիքի և օժանդակության տարածաշրջանային տեխնիկական աջակցության (KSTA 9624 & 9646-REG) ծրագրի շրջանակում 2019թ. հոկտեմբերից Արմստատին ԱԶԲ-ի կողմից տրամադրվում է տեխնիկական աջակցություն, մասնավորապես դրանցից առաջինը (KSTA 9624-REG) ներառում է ռեսուրսներ-օգտագործում աղյուսակների (SUT) կազմումը, իսկ երկրորդը (KSTA 9646-REG) միտված է տնտեսական վերլուծության և առանձին վերցրած կոնկրետ ոլորտների վերաբերյալ քաղաքականության իրականացման աջակցությանը՝ ծախսեր-թողարկում աղյուսակների (IOT), զբոսաշրջության արբանյակային (սատելիտային) հաշիվների կազմման և գլոբալ արժեքի շղթայի վերլուծության (GVC) միջոցով:Ներկայում կազմվել են 2017թ.-ի «ռեսուրսներ-օգտագործում» աղյուսակները, |

| | |
|---|---|
| | որոնք դեռևս չեն կարող հրապարակվել պայմանավորված այն հանգամանքով, որ աշխատանքներ են տարվում նաև 2018թ.-ի աղյուսակների կազմման ուղղությամբ, որի ընթացքում ճշգրտումներ են իրականացվում նաև 2017թ.-ի «ռեսուրսներ-օգտագործում» աղյուսակներում: Խնդրո առարկա աղյուսակների պարբերական հենքով կազմումն իր աշխատատարությամբ և ժամանակատարությամբ անհնար է դարձնում առկա ռեսուրսներով այդ աշխատանքների իրականացումը: |
| 2. **Չդիտարկվող տնտեսության գնահատականներ:** Հարկային պոտենցիալի հաշվարկներում որոշակի դեր ունեն նաև չդիտարկվող տնտեսության գնահատականները: Մասնավորապես, ներկայումս ՀՀ ՖՆ կիրառվող՝ ՀՀ ֆինանսների նախարարի ս.թ. ապրիլի 27-ի 193-Լ հրամանով հաստատված մեթոդաբանությունը ներառում է ՀՆԱ հաշվարկի հիմքում ընկած չդիտարկվող և ստվերային տնտեսության NACE դասակարգմամբ ոլորտային գնահատականների օգտագործում, որը ներկայումս ստացվում է ՀՀ ՎԿ-ին առանձին ուղղվող նամակների միջոցով: Հետևաբար, կարևոր ենք համարում այդ ցուցանիշի պարբերական (առնվազն՝ տարեկան) հրապարակումը, ինչը ոչ միայն առավել օպերատիվ կդարձնի հարկային պոտենցիալի գնահատումները, այլ նաև կարևոր կլինի ինչպես այդ գնահատումների, այնպես էլ՝ ընդհանրապես վիճակագրության թափանցիկության տեսակետից: | **2.** Չդիտարկվող տնտեսության գնահատականների հրապարակման առնչությամբ ներկայացված առաջարկությունը չի ընդունվում. Այդ հաշվարկների իրականացումը և ՀՆԱ-ում դրանց ներառումն իհարկե բարելավում է ազգային հաշիվների ցուցանիշների ամբողջականությունը և որակը, սակայն այդ տվյալների հրապարակումը չի նախատեսվում և չի խրախուսվում ինչպես ԱՀՀ մեթոդաբանությամբ, այնպես էլ ԱՄՀ-ի ՏՏՀՍ-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ գնահատականներն իրականացվում են անուղղակի եղանակներով՝ օգտագործելով տարբեր աղբյուրներ և գնահատման մեթոդներ, այդ թվում՝ փորձագիտական, բացի այդ դրանց հրապարակումը կարող է հասարակության տարբեր շերտերի շահարկումների (այդ թվում՝ |

| | |
|---|---|
| | քաղաքական) առիթ հանդիսանալ: Ելնելով վերոհիշյալից Արմստատը չդիտարկվող տնտեսության գնահատականների վերաբերյալ տվյալները տրամադրում է Արմստատին ուղղվող նամակների միջոցով՝ ներքին օգտագործման համար: |
| 4.Հայտնում ենք նաև, որ ՀՀ տնտեսության ներկա վիճակը վերլուծելու և գնահատելու նպատակով խնդիր է առաջացել ուսումնասիրել և վերլուծել պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ) թվաքանակը և շարժը, ուստի առաջարկում ենք հավաքագրել և հրապարակել տեղեկատվություն՝ պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակի վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացված ձևաչափի:<br>Պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակի վերաբերյալ համապատասխան աղյուսակում առաջարկվում է կատարել հետևյալ լրամշակումները՝<br>Տրամադրել տեղեկություններ հետևյալ կտրվածքով՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ առանձնացնել «ռեզիդենտների կողմից գրանցված», «ոչ ռեզիդենտների կողմից գրանցված, այդ թվում ՌԴ քաղաքացիների կողմից գրանցված», ինչպես նաև առաջարկվում է աղյուսակում ավելացնել սյունակներ, որտեղ համապատասխան տեղեկություններն առանձնացված կլինեն ամսական կտրվածքով: | **4.** Պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը իր բովանդակությամբ դասվում է վարչական բնույթի տեղեկությունների շարքին, որոնց վերաբերյալ հաշվառումների իրականացումը դուրս է Պաշտոնական վիճակագրության մասին օրենքով և վիճակագրական ծրագրերով սահմանված Արմստատի գործառույթների շրջանակից: Նշված տեղեկությունների գրանցում/հաշվառում և դրանց հիման վրա վարչական տեղեկատվական շտեմարաններ վարող պետական լիազոր մարմինը՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունն է, որին էլ առաջարկվում է դիմել՝ խնդրո առարկա տեղեկատվության ստացման նպատակով: |
| 5.Հաշվի առնելով, որ ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) | **5. Չի ընդունվել:** |

| | |
|---|---|
